ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/88

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.03.2022թ. թիվ 26/26-1/3664-2022 գրությամբ «Լույսշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.02.2022թ. թիվ 01/61-4291 գրության հիման վրա, 03.03.2022թ. թիվ 26/26-1/3664-2022 գրությամբ նախաձեռնել է «Լույսշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լույսշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լույսշին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Լույսշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/88 ընթացակարգի շրջանակներում 14.03.2022թ. ժամը 09:26-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.02.2022թ. թիվ 01/61-4291 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Լույսշին» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից):

Ընթացակարգի շրջանակում Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով՝ մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերությամբ, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը: (...)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/88 ընթացակարգի շրջանակներում 14.03.2022թ. ժամը 09:26-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/88 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/88 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց, Գ. Նժդեհի փողոցների, Արշակունյաց պողոտայի և Գ. Նժդեհի հրապարակի, բակային տարածքների գեղարվեստական լուսավորման ցանցի վերանորոգման, պահպանման և լուսատուների փոխարինման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Լույսշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

««Լույսշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը վավերացված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Դիմում-հայտարարությունը /հավելված 1/ ներկայացված է հրավերով սահմանված հավելված 1 ձևին անհամապատասխան:

Իրական շահառուների մասին հայտարարագրում «Պետության կամ համայնքի մասնակցությունը» ենթաբաժինը /3/ լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Պետության կամ համայնքի մասնակցության բացակայության պարագայում հարկավոր չէ լրացնել վերոնշյալ դաշտը: Միևնույն ժամանակ մասնակցի կողմից միաժամանակ լրացվել են ընդերքագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների իրական շահառու հանդիսանալու հիմքերը ենթաբաժինը, այն պարագայում, երբ հարկավոր է լրացնել հիշյալ ենթաբաժիններից միայն մեկը:

«Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնում հարկավոր է լրացնել 4.7.1 և 4.7.2 դաշտերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 16.02.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.02.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լույսշին» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.03.2022թ. թիվ 26/26-1/3664-2022 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 24.02.2022թ. թիվ 01/61-4291 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ <u>գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,</u>

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել</u>***

անհամապատասխանությունը:

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝

(...)

8.9 ***Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: Սույն պարբերության կիրառման դեպքում կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը պետք է առնվազն պարունակի տվյալներ մասնակցի (մասնակիցների) անվանման, հարկ վճարողի հաշվառման համարի և հայտը ներկայացվելու ամիս ամսաթվի և տարեթվի մասին:Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

8.10 Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է,*** ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի

ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

(...)

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց, Գ. Նժդեհի փողոցների, Արշակունյաց պողոտայի և Գ. Նժդեհի հրապարակի, բակային տարածքների գեղարվեստական լուսավորման ցանցի վերանորոգման, պահպանման և լուսատուների փոխարինման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Լույսշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

««Լույսշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը վավերացված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Դիմում-հայտարարությունը /հավելված 1/ ներկայացված է հրավերով սահմանված հավելված 1 ձևին անհամապատասխան:

Իրական շահառուների մասին հայտարարագրում «Պետության կամ համայնքի մասնակցությունը» ենթաբաժինը /3/ լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Պետության կամ համայնքի մասնակցության բացակայության պարագայում հարկավոր չէ լրացնել վերոնշյալ դաշտը: Միևնույն ժամանակ մասնակցի կողմից միաժամանակ լրացվել են ընդերքագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների իրական շահառու հանդիսանալու հիմքերը ենթաբաժինը, այն պարագայում, երբ հարկավոր է լրացնել հիշյալ ենթաբաժիններից միայն մեկը:

«Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնում հարկավոր է լրացնել 4.7.1 և 4.7.2 դաշտերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային

գնումների համակարգի միջոցով 16.02.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.02.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լույսշին» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված կարգով և ժամկետում անհամապատասխանությունը չի շտկել, այսինքն՝ «Լույսշին» ՍՊԸ-ն «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-22/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.03.2022թ. թիվ 26/26-1/3664-2022 գրությամբ «Լույսշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**